ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման և ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ իրականացվել և իրականացվում են ստուգումներ.

1. ՀՀ վերահսկիչ պալատի 2013 թվականի գործունեության տարեկան ծրագրի 4-րդ և 10-րդ կետերի համաձայն՝ 2013 թվականի փետրվարի 8-ից մինչև դեկտեմբերի 4-ը վերահսկողություն է իրականացվել.

ա/ <<Բույսերի պաշտպանության միջոցառումներ>>, <<Գյուղատնտեսական կենդանիների պատվաստումներ>>, <<Գյուղական խորհրդատվական ծառայություններ>>, <<Գյուղատնտեսական հողօգտագործողներին պետական աջակցություն>>, <<Անտառապահպանական ծառայություններ>> և <<Տոհմային երինջների ձեռքբերում>> ծրագրերի նկատմամբ,

բ/ Պետական բյուջեի միջոցներով իրականացվող գնումների օրինականության և գործող համակարգի արդյունավետության նկատմամբ:

Ստուգման ժամանակահատվածը ընդգրկում է 2011-2013 թվականները:

2. ՀՀ վարչապետի 2013 թվականի նոյեմբերի 15-ի <<Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման նկատմամբ հսկողության 2014 թվականի ծրագիրը հաստատելու մասին>> N 1057-Ա որոշման հավելվածի համաձայն իրականացվում է վերահսկողություն:

Ստուգման ժամանակահատվածը ընդգրկում է 2011-2013 թվականները և 2014 թվականի հաշվետու ժամանակաշրջանը: